

ԱՆԳԼՈՒ-ԱՍԵՐԻԿԻՅԱՆ ԳԻՏԱՖԱՆՏԱՍՏԻԿ ԳՐԱԿԱՆ
ԳԻՄԿՈՒՐՄԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ՉԱՐԳԱՅՈՒՄԸ,
ՀԻՄՆԱԿԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Գայանե Մուրադյան

Երևանի պետական համալսարան

Գիտական ֆանտաստիկան գեղարվեստական գրականության տեսակ է, գրական դիսկուրս, որը հիմնված է ճշգրիտ կամ երևակայական գիտական դրույթների, վարկածների, կանխատեսումների վրա: Այն նպատակաուղղված ձևով ուսումնասիրում է գիտական և տեխնոլոգիական առաջընթացի և հասարակության վրա դրա ազդեցության ու հետևանքների առանձնահատկությունները: Գեղարվեստական գրականության այս եզակի *բանական* դիսկուրսի գոյաբանական հիմքը գիտականի և գեղարվեստականի անբախտելի հակադրամիասնությունն է: Հոդվածը ներկայացնում է այս յուրօրինակ ժանրի պատմական զարգացումը և բացառիկ թեմատիկան, որը կարևոր դեր է կատարում տվյալ դիսկուրսը գեղարվեստական գրականության մյուս դրսևորումներից տարբերակելու գործում:

Բանալի բառեր. գիտաֆանտաստիկա, գիտաֆանտաստիկ Ոսկեդար, Նոր ալիք, Սայբերփանք, գիտաֆանտաստիկ թեմատիկա:

Ներածություն

Գիտաֆանտաստիկ գրականության պատմությունը ժամանակագրություն է, որը հավանաբար սկիզբ է առել անտիկ դիցաբանությունից և բանահյուսությունից և ձգվում է մինչև այսօրվա *եսոստոդային պատերազմներ* կոչվող տիեզերական դյուցազներգությունը: Որպես գրական դիսկուրս, իր ծագման և սկզբնավորման, ինչպես նաև զարգացման համար գիտաֆանտաստիկ ժանրը մեծապես պարտական է միջնադարյան ժամանակաշրջանից սկիզբ առած աշխարհագրական նոր հետազոտություններին և գիտական հայտնագործություններին, որոնք նպաստեցին ինտելեկտուալ հեղափոխությանը և գիտության ու ռոմանտիզմի միաձուլմանը: Այս միաձուլման արդյունքում 16-18-րդ դդ. ծնվեցին ուտոպիական մի շարք ստեղծագործություններ, ապա՝ Մերի Շելլիի *Ֆրանկենշտեյն* (1818) գոթական վեպը: Արդեն 19-րդ դարի վերջին տասնամյակներում ամերիկյան և եվրոպական գիտաֆանտաստիկ գրական ժանրը մեծ մասսայականություն էր վայելում, թեև այն դեռևս չէր տարրորշվել

որպես նոր գրական դիսկուրս և դեռևս չէր կոչվում իր բնույթին և էությանը այնքան բնորոշ անվամբ՝ *science fiction*:

Գիտաֆանտաստիկ գրականության սկզբնավորումն ու Ոսկեդարը

Բուն գիտաֆանտաստիկ գրականությունը (*science fiction proper*) սկզբնավորվեց 19-րդ դարի սկզբներին, երբ ի հայտ եկան դրա իսկական նախահայրերը՝ Ժյուլ Վեռնը (1828-1905) և Հերբերտ Ուելսը (1866-1946) (Encarta 2010): Դարավերջին գիտաֆանտաստիկ դասական թեմաներով (տիեզերական և տարաժամանակյա ճամփորդություններ, ուտոպիա և դիստոպիա, այլնորակայիններ, սոցիալիզմ, կրոն) ստեղծագործում էին բրիտանացի հեղինակներ Ու. Մորրիսը, Ռ.Լ. Ստիվենսոնը, Գ. Չեսնին, ամերիկացի հեղինակներ Ջ. Թաքերը, Է. Բելլամին, Ու. Հարպերը, Մ. Տվենը:

Ժամրի սկզբնավորումը և *Ժամանակակից գիտաֆանտաստիկա (Modern Science Fiction)* կոչվող ուղղության սկզբնական փուլը (1926-1938), զանգվածայնացումն ու անվանակոչումը ազդարարվեց 1926թ.-ին, երբ ամերիկյան հրատարակիչ Հյուգո Գերնսբաքը հիմնադրեց առաջին անգլալեզու, բացառապես գիտաֆանտաստիկ նյութի վրա հիմնված *Amazing Stories* հանդեսը: Նա առաջին անգամ ժանրն առանձնացրեց գեղարվեստական գրականության մյուս ձևերից՝ կարևորելով ժանրի հիմքը կազմող գիտականի և գեղարվեստականի հակադրամիասնությունը: Այս առանձնահատկության հիման վրա Գերնսբաքը անցյալում և իր ժամանակներում գրված գրական նոր դասին (Westfahl 1992) համապատասխանող ստեղծագործություններն անվանեց *scientifiction*: Այս շրջանում ժանրը դեռևս չէր համարվում լուրջ գրականություն, այն *չափազանց պարզ էր և միամիտ* (Asimov 1974) ոչ միայն թեմատիկայի և աշխարհայացքի, այլև լեզվի ու ոճի առումով: Սակայն մեկ տասնամյակից էլ քիչ ժամանակ պահանջվեց, որպեսզի մշակվեն ժանրի գրական նորմերը և հիմնական թեմատիկան՝ փոփոխություն, ժամանակ, տիեզերք, տարաժամանակյա պատմություն:

1938թ.-ին Ջոն Զամփրեյլը հիմնադրեց և դարձավ հանրահայտ *Astounding Science Fiction* հանդեսի խմբագիրը՝ նախանշելով գիտաֆանտաստիկայի Ոսկեդարի (1938-1960) սկիզբը (Taormina 2005) և համախմբելով ժամանակի գիտաֆանտաստիկայի հեղինակներին ու երկրպագուներին: Այս խմբի անդամներ էին Ա. Ազիմովը, Դ. Նայթը, Դ.Ա. Ուոլիսյանը, Ֆ. Պոլը, Ջ. Բլիշը, Ռ.Ա. Հայնլայնը, Ա.Ս. Քլարքը, և այլք (Resnick 1997:17-24; 2002:68): Ոսկեդարում սրընթաց աճեց ժանրի սոցիալ-հասարակական նշանակությունը, այլ խոսքով, այն վերածվեց հզորագույն սոցիալ-հասարակական գործոնի՝ էական ազդեցություն թողնելով ոչ միայն բազմաթիվ երկրպագուների ու գրական շրջանակների ներկայացուցիչների վրա, այլև պայմանավորելով ռազմական,

տեղեկատվական տեխնոլոգիաների, կինոարդյունաբերության և նույնիսկ գիտության (հատկապես կենսատեխնոլոգիայի և դեղագիտության) ոլորտների բազմաթիվ գործառույթներ: Սա այն շրջանն էր, երբ սոցիալ-հասարակական և տեխնոլոգիական արտալեզվական գործոնների շնորհիվ գիտաֆանտաստիկ դիսկուրսը (ԳՖԴ) սկսեց ձևավորվել որպես գեղարվեստական ոճին պատկանող ժանր, որպես գործառական-ոճական նոր դրսևորում՝ լեզվական և արտալեզվական առանձնահատկությունների իր սեփական համակարգով, որը հնարավորություն էր տալիս խոսքային ուրույն ձևերով իրացնել գիտականի և գեղարվեստականի գոյաբանական հակադրամիասնության վրա խարսխված տեղեկատվական և ներգործման/գեղագիտական գործառույթները: Բացի այդ, գիտաֆանտաստիկական ձեռք բերեց նոր՝ գրական դիսկուրսի կարգավիճակ, թեմատիկական բնութագրվեց գիտական նվաճումներ, առաջընթաց և հրաշքի զգացողություն պատկերող պատմասություններով, որոշ չափով անդրադարձ կատարվեց նաև կրոնական և հոգևոր թեմաներին, որոնք հիմնականում անտեսվել էին գերմաքայան գիտաֆանտաստիկայում: Ոսկեդարի վերջին տարիներին ԳՖԴ-ն մուտք գործեց զանգվածային հաղորդակցության միջոցներ՝ ռադիո և կինոարդյունաբերություն:

Գիտաֆանտաստիկայի Ոսկեդարը շարունակվեց մինչև 1950-ականների վերջերը, երբ ետպատերազմյան գիտական առաջընթացը՝ որպես հզոր արտալեզվական գործոն, սկսեց իր նոր կանոնները թելադրել գիտության հետ ամենասերտ առնչությունն ունեցող գրական այս դիսկուրսին: Ջ. Քամփբելլի *Astounding Science Fiction* հանդեսին հաջորդեց Ֆ. Փոլիի *Galaxy* հանդեսը, որը գրողների նոր և տաղանդավոր սերնդին հորդորեց և խրախուսեց ստեղծագործել՝ սերտորեն առնչվելով և հաշվի առնելով տվյալ ժամանակաշրջանի գիտա-տեխնոլոգիական և սոցիալ-հասարակական զարգացումներն ու փոփոխությունները:

Նոր ալիք (1960 – 1980) և Սայրեքֆանք (1980 - մինչև այսօր)

Գիտաֆանտաստիկ ժանրի զարգացման մեծագույն խթան դարձավ 1957թ.-ի խորհրդային *Սպուտնիկ* տիեզերանավի արձակումը, որի շնորհիվ իրական աշխարհն ավելի սերտ հաղորդակցվեց գիտաֆանտաստիկ աշխարհի հետ և թելադրեց իր նոր պայմանները այդ ոլորտում ստեղծագործել ցանկացող հեղինակներին. հետևել անսանձ երևակայությանը, քիչ կենտրոնանալ տիեզերանավով ճամփորդող և լաբորատորիաներում տքնող հերոսների վրա և կարևորել ժանրի համար առաջնային համարվող փոփոխության գաղափարը, որն այս դեպքում պարզաբանում էր, թե ինչպես պետք է նորագույն գիտական, մասնավորապես տիեզերական նվաճումները, փոխեն մարդկության ներկան և ապագան:

Թռուցիկ պատմական անդրադարձ կատարելով վերոհիշյալ խորհրդային *Սպուտնիկ* տիեզերանավին, հավելենք, որ դրա ուղղակի և անուղղակի ազդեցությունը շատ մեծ էր գիտաֆանտաստիկայի հետագա ճակատագրի ձևավորման վրա այն առումով, որ գիտական այս նվաճումը առաջացրեց այսպես կոչված *սպուտնիկի ճգնաժամ (Sputnik crisis)* ՍՄՀՄ-ի գլխավոր մրցակից ԱՄՆ-ում, խթանեց ԱՄՆ-ի և Սովետական Միության միջև ընթացող սառը պատերազմի մաս կազմող տիեզերական մրցավազքը, որն էլ հանգեցրեց նոր քաղաքական, ռազմական և գիտական նվաճումների: *Սպուտնիկը* նշանավորեց տիեզերական դարաշրջանի (Space Age) սկիզբը (Swenson et al 1966:71) ոչ միայն իրական, այլև գիտաֆանտաստիկ աշխարհում:

Ժամանակը, պատճառահետևանքային պարադոքսները, հրեշավոր աշխարհների քննադատությունը դարձան ԳՖՂ-ի Նոր ալիք (the New Wave) սոցիալական ուղղվածություն ունեցող շարժման և դրա նախահայրերը համարվող իռլանդացի Սամուել Բեքեթի և ամերիկացի Ուիլյամ Ս. Բարրոուզի ստեղծագործության գլխավոր թեմատիկան:

1960թ.-ին բրիտանացի գրողների նոր սերնդի նախաձեռնած և ամերիկյան գործընկերներով համալրված *Նոր ալիք* ուղղությունը, տուրք տալով սյուրռեալիզմին և հոգեբանական դրամային, *փորձարկում էր գիտաֆանտաստիկայի տարրեր ձևեր և մոդելներ* (Encyclopedia Britannica 2012)՝ ստեղծելով տարօրինակ և միստիկական կրոններ, քաղաքական ինտրիգներ, փլուզվող էկոհամակարգեր, մարդաբանական բնույթի սոցիալ-կենսաբանական փոփոխություններ, սեռական զգացմունքներ, աշխարհի վերջ (Browning 1993) պատկերող հրաշակերտ պատմասություններ:

Ոչ մի դեպքում չանտեսելով Նոր ալիքի թեմատիկ, գիտական և սոցիալ-հասարակական նշանակությունը՝ այնուամենայնիվ անհրաժեշտ է նշել, որ դրա ամենամեծ և հավանաբար նաև ամենակարևոր ձեռքբերումը (քանի որ խոսքը գրական դիսկուրսի մասին է) բացառապես գրագետ, գեղեցիկ և պատկերավոր լեզվի և ոճի կարևորումն էր, որի շնորհիվ գուցեև իր ստեղծման և զարգացման պատմության մեջ առաջին անգամ ԳՖՂ-ն հավակնեց հավասար տեղ գրավել գեղարվեստական ոճի դասական ժանրերի կողքին:

Նորալիքյան կարևոր նվաճումներից է գիտաֆանտաստիկայի՝ որպես ակադեմիական գիտակարգի (Science Fiction Studies) վերջնական ձևավորումը, որն աստիճանաբար կարողացավ գերիշխող դարձնել այն տեսակետը, որ անլուրջ համարված գիտաֆանտաստիկան իրականում փաստականի և գեղարվեստականի միասնության վրա խարսխված յուրօրինակ և հետաքրքիր դիսկուրս է, արժեքավոր պատմական, մշակութային, սոցիալ-հասարակական և հաղորդակցական տարրերի ուսումնասիրության ինքնատիպ ոլորտ:

Արդեն վաղ 80-ականների համաշխարհային տեխնոլոգիական առաջընթացը, մասնավորապես համակարգչային տեխնիկայի հարաճուն զարգացումը, որպես հզոր արտալեզվական գործոն, պահանջում էր նոր՝ ներլեզվական ոճագործառական փոփոխություններ: Այս փոփոխությունների նկատմամբ ամենազգայուն ժանրը, իհարկե, իր գոյաբանական հիմքում գիտությունը որպես անբակտեղի մաս պարունակող գիտաֆանտաստիկ գրականությունն էր: Անհնարին էր չնկատել համակարգչային գործոնի ուղղակի ներկայությունը հասարակության սոցիալ-քաղաքական և մշակութային կյանքում, ինչպես նաև խնդրո առարկա դիսկուրսում: Նոր ալիքի գաղափարախոսության փոփոխությունը դառնում էր համակարգչայնացող հասարակության պահանջը, որի արդյունքում էլ ձևավորվեց Սայբերփանք (Cyberpunk) գրական ուղղությունը: Սայբերփանքն արտացոլում է բանականության ու զգացմունքների ժամանակակից դրսևորումների (cyber) և օտարացածների, լուսանցքում հայտնվածների, արտաքսվածների (punk) սոցիալական զգացողության կապը, որն էլ իր ակնհայտ դրսևորումն է գտնում սայբերփանքյան թեմատիկայում: Հավանաբար հենց այս թեմատիկան է պատճառը, որ գիտաֆանտաստիկական և նրա երկրպագուներին երբեմն համարում են արտասովոր հետաքրքրություններ ունեցող առանձին ենթամշակույթ:

Սայբերփանք ուղղության ներկայացուցիչներ Բ. Ստերլինգը, Ջ. Շրլլին, Ն. Ստիվենսոնը, Ու. Գիբսոնը և այլք ձգտում են լիովին ինտեգրել բարձր տեխնոլոգիան և ինչպես ակնհայտ, այնպես էլ թաքնված, ընդհատակյա փոփ մշակույթը, տեխնոլոգիական և կենսաբանական փաստերն ու երևակայությունը: Այս ժանրով ստեղծագործող հեղինակների կերտած աշխարհներում ապրող հերոսների համար համակարգչային սայբերտարածքը (cyberspace) բնօրրան է, հայրենիք, գոյության և կեցության ձև: Սայբերտարածքի հասկացությունը ծնունդ է առել Ուիլյամ Գիբսոնի սայբերփանք ոճի *Նյուրոմանտեր* (1984) հանրահայտ վեպից և գրավել ամբողջ աշխարհը (Landon 1997): Նույնիսկ վեպի վերնագիրն է արտացոլում ԳՖՆ-ի գործառական էությունն ու բանականի և երևակայականի սերտ միասնությունը (neuro + necromancer – նյարդ + հրաշագործ):

Ի տարբերություն ԳՖՆ-ի նախորդ ուղղությունների, որոնք ավանդաբար լավատեսական էին գիտական առաջընթացի նկատմամբ, Սայբերփանքի հիմնական թեմատիկան ժամանակակից աշխարհի ամենամեծ ողբերգությունն է այն մասին, թե ինչպես են տեղեկատվական տեխնոլոգիաները (համակազգային, զանգվածային հաղորդակցության), որոնք անհավատալի արագությամբ են զարգանում մեր օրերում, ստեղծում քաղաքական, տնտեսական, կրոնական բռնատիրական համակարգեր և ոչնչացնում լուսանցքում հայտնված մարդկային մեծամասնությանը (Hayward 1993:180-204): Մարդ-

կությունը դառնում է իր ստեղծածի գոհը: Հենց սա է Սայբերփանքի գլխավոր գաղափարախոսությունը:

Ինչ վերաբերում է Սայբերփանքի լեզվին և ոճին, ապա հարկ է նշել, որ այս շրջանում կատարելության հասցվեց նորալիքյան արդեն իսկ գեղեցիկ և պատկերավոր գրական լեզուն՝ միայն իրեն բնորոշ, եզակի և խորհրդավոր նրբերանգներով:

Սայբերփանքը շարունակեց հավատարիմ մնալ իր թեմատիկային և ոճին մինչև 1990-ականների վերջերը, որից հետո մուտք գործեց Պոստսայբերփանք (Postcyberpunk) և մեծապես փոփոխելով ու ընդլայնելով իր ազդեցության ոլորտը՝ ներառելով ժամանակակից մշակույթի բազմաթիվ ոլորտներ (կինոարդյունաբերություն, երաժշտություն, արվեստ, նորաձևություն, դիզայն, համակարգչային հաղորդակցություն և այլն), և ստեղծեց ժանրային բազմաթիվ նոր տարատեսակներ ու նոր թեմաներ. շրջակա միջավայր, բնական պաշարների սղություն, պարենային ճգնաժամ, կենսատեխնոլոգիա և նանոտեխնոլոգիա, համացանցի տեղեկատվական ընդլայնում, գիտական և տիեզերական նոր նվաճումներ, և այս ամբողջի լույսի ներքո՝ մարդկային սոցիալական, հոգեբանական, կենսաբանական խնդիրների արծարծում: Հիմնական շեշտը, իհարկե, դարձյալ դրված է ապագայի վրա, բայց ի տարբերություն բոլոր նախորդ շրջանների, այս անգամ արդեն քննարկվում է շատ մոտ ապագան:

Եզրակացություն

Ի մի բերելով գիտաֆանտաստիկայի հակիրճ պատմությունը՝ կարելի է եզրակացնել, որ 18-րդ դարի արդյունաբերական հեղաշրջմանը հաջորդող սոցիալական վերափոխումները ստիպեցին գրողներին մտորել տեխնոլոգիայի, հասարակական կյանքի վրա դրա ազդեցության և հասարակության հետագա զարգացման ուղիների մասին: Աստիճանաբար սկսեցին ձևավորվել հետագայում ժանրը բնորոշող *սյասկերներ (icons)* (Wolfe 1979) կամ *նախատիպեր (archetypes)* (Le Guin 1993) կոչվող դասական թեմատիկ շարքը. տիեզերական և տարաժամանակյա ճանփորդություններ, տարաժամանակյա գիտություն և գիտական օրենքներ, այլմոլորակային և տեխնոէակներ, մուտանտներ, նոր մոլորակների գաղութացում, ռազմական պատերազմներ, հասարակական փորձարարական մոդելներ և նոր հասարակարգեր, հոգեբանության, ֆիզիկայի և այլ գիտական ոլորտներում իրականացող անիրական կամ այսպես կոչված *մտքի գիտափորձեր (thought experiments)*: Բուն գիտաֆանտաստիկական սկզբնավորվեց 19-րդ դարում, բայց որպես վերջնականորեն ձևավորված գործառական դիսկուրս տարորոշվեց 20-րդ դարի երեսնականներից հետո, երբ գիտությունը ներթափանցեց հասարակական կյանք և մեծ հետաքրքրություն առաջացրեց հասարակական կյանքի վրա գիտության ազդեցությանը անդ-

բաղադրող գրական ստեղծագործությունների նկատմամբ: Նորալիքյան ժամանակաշրջանում (1960-1980) ժանրը վերջնականապես ձևավորվեց որպես գեղարվեստական գրականության ավանդական ժանրերին հավասար կարգավիճակ ունեցող ոճագործառական դրսևորում, որպես ոճավորված լեզվական միավորներից կազմված կանոնարկված գրական դիսկուրս: Համակարգչային տեխնիկայի հարաճուն զարգացման արդյունքում 1980-ականներին ձևավորված Սայբերփանքը ժանրում առաջացրեց նոր ներլեզվական ոճագործառական փոփոխություններ: Գիտաֆանտաստիկական վերածվեց գերժամանակակից խոսքային դրսևորման: Սայբերփանքի հիմնական թեմատիկական գիտության և տեղեկատվական տեխնոլոգիաների հարաճուն զարգացումն է, ժամանակակից աշխարհի համակարգչայնացումը, նշված գործընթացների բացասական ազդեցությունը մարդկային հասարակության և անհատի վրա: Մարդկությունն սկսում է դառնալ իր ստեղծած «գերգիտության» զոհը: Հենց սա էլ մերօրյա գիտաֆանտաստիկ դիսկուրսի հիմնական գաղափարախոսությունն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Asimov, I. (ed) (1974) *Before the Golden Age: A Science Fiction Anthology of the 1930s*. NY: Doubleday.
2. Browning, T. (1993) *A Brief Historical Survey of Women Writers of Science Fiction*. Austin: University of Texas Press.
3. *Encarta Online Encyclopedia/Microsoft Encarta Multimedia Encyclopedia*. (Copyright 2010) Encyclopedia Britannica, Inc. Available at: <<http://www.britannica.com/EBchecked/topic/186436/Encarta>> [Accessed June 2014].
4. *Encyclopedia Britannica Online*. (Copyright 2012) *Encyclopedia Britannica Inc*. Available at: <<http://www.britannica.com/>> [Accessed June 2014].
5. Hayward, Ph. (1993) *Future Visions: New Technologies of the Screen*. London: BFI Publishing.
6. Landon, B. (1997) *Science Fiction after 1900. From the Steam Man to the Stars*. Woodbridge, CT: Twayne Publishers.
7. Le Guin, U.K. and Attebery, B. (eds) (1993) *Introduction*. // *The Norton Book of Science Fiction*. NY: Norton and Co. Inc, pp. 15-42.
8. Resnick, M. (1997) *The Literature of Fandom*. // *Mimosa*, N21, pp. 17-24.
9. Resnick, M. (2002) *Once a Fan: The Selected Fannish Writings of Mike Resnick*. Maryland, US: Wildside Press.

10. Swenson, L.Jr.; Grimwood, J.M.; Alexander, C.C. (1966) *This New Ocean, A History of Project Mercury*. Washington D.C.: National Aeronautics and Space Administration.
11. Taormina, A. (2005) *A History of Science Fiction*. Northern Virginia Community College. NOVA (Copyright 2010). Available at: <<http://www.nvcc.edu/home/ataormina/scifi/history/>> [Accessed July 2014].
12. Westfahl, G. (1992) The Jules Verne, H.G. Wells and Edgar Allan Poe Type of Story: Hugo Gernsback's History of Science Fiction. // *Science Fiction Studies*, Volume 19/3. (Copyright 2010) Available at: <<http://www.depauw.edu/sfs-/backissues/58/westfahl58art.html>> [Accessed August 2011].
13. Wolfe, G.K. (1979) *The Known and the Unknown: the Iconography of Science Fiction*. Kent, OH: Kent State University Press.

Anglo-American Science Fiction: Origin, Brief History, Thematics

Science fiction is a literary discourse, a genre or sub-style of fiction, that is based on precise or invented scientific notions, hypotheses, predictions. It studies how technological progress influences society and individuals and what the results of the influence are. In the basis of this unusually *smart* or *rational* fiction is the ontological juxtaposition and inseparable unity of the factive and the fictive, of factitiousness and fictitiousness, of the logical and the imaginative. In the present paper we study of the genre of science fiction from the point of view of its origin, brief historical development and the thematic peculiarities which play an important role in distinguishing the genre from other varieties of literary fiction.

Англо-американская научная фантастика: происхождение, краткая история, тематика

Научная фантастика – литературный дискурс, жанр или подстиль художественной литературы, которая основана на точных или изобретенных научных представлениях, гипотезах, предсказаниях. В основе этой необычайно *умной* или *рациональной* фантастики лежит онтологическое единство фактического и художественного, логического и образного. В настоящей статье мы изучаем жанр научной фантастики с точки зрения ее происхождения, краткого исторического развития и тематики, которые играют важную роль в разграничении жанра от других разновидностей художественной литературы.